հետո միայն կարող էր հայտնվել Վրաստանում։ Իսկ դա կարող էր տեղի ունենալ նաև 1724—1725 թթ. Դավիթ-բեկի հետ ունեցած այն ընդհարումների ժամանակ, որոնց ընթացքում եղան դեպքեր, երբ սուլթանը, ջախջախիչ պարտություն կրելով, հազիվ կարողացավ ամեն ինչ թողած ճողոպրել։ Անհավանական չէ նաև, որ հրովարտակը տանողները ճամփին գերված լինեն Դավիթ-բեկի մարդկանց կողմից, որոնք վերցնելով նրանցից հրովարտակը, ուղարկած լինեն Վախթանգին ի գիտություն։

Այս բոլորն անշուշտ սոսկ ենթադրություններ են, քանի որ մինչև սույն հրովարտակի հայտնաբերումը, Ֆաթհ-Ալի սուլթանի մասին մեր տեղեկությունները հիմնականում սահմանափակվում էին «Պատմության» և Եսայի Հասան-Ջալալյանի տվյալներով, որոնց հիման վրա Ս. Արամյանը իր ուսումնասիրության մեջ խոսելով 1722 թ. լեզգիների արշավանքի մասին գրում է. «Պարսիկ Չարխաչի խանը, գլուխ անցած մեծ բանակի մը՝ լեզգիներու դեմ կելլեր. բանակ դնելով Պարկուշատ գավառի մեջեն անցնող Արաքս գետի եզերքը»[17]։ Պարզ է, որ խոսքը չարխչի բաշի Ֆաթհ-Ալի սուլթանի մասին է, որը, ինչպես նույն տեղում կարդում ենք, խուսափում է լեզգիների հետ ընդհարվելուց և հեռանում[18]։ Հրովարտակում նրան տրված «չարխչիբաշի» տիտղոսը կասկած չի թողնում, որ լեզգիների դեմ ելնողն ու ապա փախչողը նույն ինքը՝ «Պատմության» մեջ բազմիցս հիշվող Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանն է եղել։

Մեջ բերված հրովարտակի բովանդակությունից պարզ երևում է, որ նախապես արդեն չարխչիբաշու զինվորական պաշտոն զբաղեցնող Ֆաթհ-Ալի սուլթանը որոշակի հանձնարարություն է ստացած եղել՝ իր հրամանատարության տակ եղած զորքերին միացնելով նաև տեղի մահմեդականներից հավաքագրված աշխարհազորականների ջոկատներն (իլջարի) ու Ջիվանշիր և Քաբիրլու ցեղերի զինված ուժերը, հարձակման անցնել ճնշելու Ղափանի հայոց ապստամբությունը։ Շեշտված է հատկապես, որ «հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջվում» և որ «հայերին սաստելու գործում նրան ազատություն է տրված»։

«Պատմությունից» մեզ արդեն հայտնի է, թե ինչ ընթացք ունեցան կողմերի միջև բորբոքված արյունահեղ կռիվները։ Բացի Խոտանանի կռվից և հատկապես Բարգուշատում տեղի ունեցած մեկ ընդհարումից, որտեղ մելիք Ֆրանգյուլի դավաճանության հետևանքով Թորոս իշխանի հրամանատարությամբ կռվող հայոց զորքերը ծուղակի մեջ ընկնելով պարտություն կրեցին, մնացյալ բոլոր ընդհարումներում վերջնական հաղթանակը միշտ էլ հայոց կողմն է եղել։

Սակայն, եթե 1724 թ., ինչպես այդ երևում է նաև հրովարտակի բովանդակությունից, շահը հրահանգում էր միավորել ուժերը ոչնչացնելու «հայերին, անարբ. օսմանցիներին ու քրդերին», ապա երկու տարի անց արդեն, երբ օսմանյան ռազմակալման հետևանքով կռվող կողմերի հարաբերություններում լուրջ տեղաշարժեր էին կատարվել, նա կարգադրում էր իր հավատարիմ խաներին՝ օգնության հասնել Դավիթ-բեկին, որը միայնակ կռիվ էր մղում Բեքիր և Արաբ-Ալի փաշաների, նրանց միացած նույն Ֆաթհ-Ալի սուլթանի և օսմանցիներին հնազանդություն հայտնած այլ ուժերի դեմ։

Վ. Ոսկանյանն ու Վ. Դիլոյանը, XVIII դարի 20-ական թթ. Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականությանը վերաբերող այլ արժեքավոր վավերագրերի շարքին, 1964 թ. հրատարակեցին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող շահ Թահմասպ II-ի հիջր. 1139 թ. ջումադի I ամսին (1727 թ. հունվար) տրված մի հրովարտակի ռուսերեն թարգմանությունը, որով շահը կարգադրում է Մուհամադ-Ռիզա խան Աբդալլուին շտապ օգնության հասնել Դավիթ-բեկին, որ «իրադրության փոփոխությունների հե-

17 Պատմութիւն Ղափանցւոց. Առաջաբան, էջ 29։ Հմմտ. Եսայի Հասան-Ջալալյան. Պատմութիւն Աղուանից. Շուշի, 1839, էջ 44։

18 Նույն տեղում։